

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2020-5-2-Ա

ք. Երևան

20.08.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի օգոստոսի 20-ի նիստում քննարկեց 2020 թվականի հուլիսի 27-ին Իրինա Փահլևանյանի (Երևան, Լեռ Կամսար 30/2, քն. 36, AM) կողմից ներկայացված բողոքը «INDIGO» (№20191498) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում նշված՝ 41-րդ դասի ծառայությունների համար ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի (բ) ենթակետի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում նիշի գրանցումը ենթակա է մերժման վերը նշված ծառայության համար, քանի որ այն շփոթելու աստիճան նման է նույնատիպ ծառայությունների համար Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «INDIGO» (Kuzheliuk Tamara Mechyslavivna, prosp. Maiakovskoho, bud. 4, kv. 164, m. Kyiv 02217 (UA), N 1365076, 14.02.2017) համակցված ապրանքային նշանին: «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 122-րդ կետի 1-9 ենթակետերի, 130-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, համակցած ապրանքային նշաններին նման կարող են լինել ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում նման տարր են համարվում ապրանքային նշաններում ներառված «ինդիգո» բառը, որը նշվել է նաև նկարագրության մեջ՝ հայտի 5.2-րդ կետում, և որոնք չնայած գրված են տարբեր լեզուներով, սակայն ունեն ձայնային նմանություն, և ամբողջությամբ ներառված է գրանցված ապրանքային նշանում:

Կոլեգիայի նախագահը ներկայացրեց առաջարկ բողոքն ամբողջությամբ բավարարելու, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանի հայտով գործավարությունը շարունակելու մասին, քանի որ փորձաքննության ընթացքում բաժինը կայացրել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշում և հակադրել մի նշան, որով գործավարությունը ավարտված չէ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց որոշման մեջ թույլ տրված տեխնիկական թերության հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Իրինա Փահլևանյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ բավարարել, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «INDIGO» (No20191498) ապրանքային նշանի հայտով գործավարությունը շարունակել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ